ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2015 թվականին նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման գործընթացի վերլուծության արդյունքները

ԵՐԵՎԱՆ 2016

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Նախաբան.....3

Բաժին 1. Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման գործընթացի ընդհանուր նկարագիրն ու ընթացակարգը.....4

Բաժին 2.«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2015 թվականին նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման ժամկետների վերլուծություն 8

2.1 Էլեկտրական ցանցին միացման պայմանագրի կնքման գործընթացի վերլուծություն.....9

2.2 Էլեկտրամատակարարման պայմանագրի կնքման գործընթացի վերլուծություն 15

Եզրակացություններ և առաջարկություններ 22

Հղումներ օգտագործված նյութերին.....24

ՆԱԽԱԲԱՆ

Սույն վերլուծական տեղեկանքը կազմվել է ի կատարումն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետև՝ Հանձնաժողով) 2016 թվականի աշխատանքային ծրագրի **[Որոշում 1]** 17-րդ կետի և Հայաստանի Գործարար միջավայրի բարելավման 2016 թվականի միջոցառումների ծրագրի **[Որոշում 2]** 5-րդ կետի 1-ին ենթակետի և արտացոլում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից 2015 թվականի ընթացքում նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման գործընթացի վերլուծությունը: Վերլուծական տեղեկանքը կազմվել է՝ հաշվի առնելով Ընկերության կողմից նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման գործընթացի իրականացման վերաբերյալ եռամսյակային տեղեկատվությունները **[Տեղեկատվություն]** և նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման գործընթացի վերաբերյալ Ընկերության ներկայացրած ընդլայնված տեղեկատվությունը **[Տեղեկատվություն 1]**:

Բաժին 1.

Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման գործընթացի ընդհանուր նկարագիրն ու ընթացակարգը

Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման գործընթացը կարգավորվում է Հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» №358Ն **[Որոշում 3]** և 2007 թվականի դեկտեմբերի 21-ի «Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման վճարները հաստատելու մասին» №659Ն **[Որոշում 4]** որոշումներով:

2015 թվականի ընթացքում էլեկտրական ցանցին միացված բաժանորդների վերաբերյալ տեղեկատվության համաձայն, էլեկտրական ցանցին են միացվել 3 774 բաժանորդների սպառման համակարգեր, որոնց ուղղությամբ Ընկերությունն իրականացրել է 2,3 մլրդ դրամի ներդրումներ: Համեմատության համար հարկ է նշել, որ 2014 թվականին էլեկտրական ցանցին միացված բաժանորդների թիվը կազմել է 4 292, որոնց մասով Ընկերությունն իրականացրել է 4,3 մլրդ դրամի ներդրումներ, իսկ 2013 թվականին՝ 4 274 բաժանորդների սպառման համակարգերի ողղությամբ իրականացվել են 3,1 մլրդ դրամի ներդրումներ: Ներդրումների նշված ծավալներն առավել մանրամասն ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման գործընթացն իրականացվում է 3 հիմնական փուլերով.

1. սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման նպատակով դիմող անձն Ընկերություն է ներկայացնում իրեն պատկանող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման դիմում,

2. մատակարարը, դիմող անձի դիմումն ստանալուց հետո, Որոշում 3-ով սահմանված ժամկետներում.

2.1 մշակում է տեխնիկական պայմանները և 6 (10) կՎ և բարձր լարման ցանցերին միացման դեպքում այն համաձայնեցնում սպառողի հետ,

2.2 մշակում է անհրաժեշտ նախագծանախահաշվային փաստաթղթերը, իսկ պարզեցված միացման դեպքում՝ միացման տեխնիկական նկարագիրը,

2.3 կատարում է բոլոր անհրաժեշտ համաձայնեցումները պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ անձանց հետ,

2.4 դիմող անձին է ներկայացնում միակողմանի կնքված միացման պայմանագիրը:

3. մատակարարն իրականացնում է դիմող անձի սպառման համակարգի միացումն էլեկտրական ցանցին՝ ապահովելով դիմումում նշված տեխնիկական հարաչափերով էլեկտրամատակարարումը և հաշվառումը և էլեկտրական ցանցին միացման պայմանագրում սահմանված ժամկետում դիմող անձին է ներկայացնում էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկ:

Նշված երեք փուլերն առավել հանգամանալից կարգավորվում են Ընկերության ներքին կանոնակարգով: Այդ կանոնակարգով սահմանվում է գործընթացների հաջորդականությունը և համապատասխան տևողությունները:

Համաձայն ընկերության ներքին կանոնակարգի՝ նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման վերոնշյալ երեք փուլերը տարանաջատված են 6 ներքին ենթագործառույթների (Գծապատկեր 1), որոնք իրականացվում են հիմնականում Ընկերության կառուցվածքային ստորաբաժանումների և որոշ դեպքերում՝ կապալառու կազմակերպությունների կողմից: Հարկ է նշել, որ ներկայացված գործընթացների մեծ քանակն առավել հավանական է դարձնում նշված օղակների միջև խզման հնարավորությունը, որը կարող է բերել էլեկտրական ցանցին միացման պայմանագրի կնքման՝ Որոշում 3-ով սահմանված ժամկետների խախտումների դեպքերի ավելացման:

Գծապատկեր 1

Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման գործընթացի նկարագրություն



Հաշվի առնելով նշված գործոնի ազդեցությունը «Համաշխարհային բանկի» կողմից հրապարակվող «Գործարարությամբ զբաղվելը» ամենամյա զեկույցի «Էլեկտրական ցանցին միացում» ցուցիչի վրա՝ Հանձնաժողովը շարունակական աշխատանքներ է իրականացնում նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման գործընթացի կատարելագործման ուղղությամբ՝ օպտիմալացնելով նոր սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման ժամկետները և հստակեցնելով նոր սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման ընթացակարգը՝ դրանով նպաստելով նաև նշված զեկույցի շրջանակում հրապարակվող երկրների ցանկում Հայաստանի Հանրապետության զբաղեցրած դիրքի բարելավմանը: Մասնավորապես՝ Հանձնաժողովի 2011 թվականի №307Ն, 2012 թվականի №65Ն, 2014 թվականի №103Ն և 2015 թվականի №387Ն որոշումներով կրճատվել են նոր սպառողների սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման ժամկետները, իսկ Հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 27-ի №308Ն և դեկտեմբերի 7-ի №568Ն որոշումներով նաև՝ միացման վճարները: Արդյունքում Հայաստանի Հանրապետության դիրքը բնութագրող ինդեքսը 2012 թվականի համեմատությամբ բարելավվել է 54-ով և 2015 թվականին կազմել 96:

Այս համատեքստում, հաշվի առնելով միջազգային լավագույն փորձը և նպատակ ունենալով հնարավորինս պարզեցնել նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման ընթացակարգը և կրճատել սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման ժամկետները՝ Հանձնաժողովը համատեղ աշխատանքներ է իրականացնում Ընկերության հետ:

ԲԱԺԻՆ 2.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2015 թվականին նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման ժամկետների վերլուծություն

Հաշվի առնելով էլեկտրական ցանցին միացման գործընթացի նկարագիրը՝ Տեղեկատվություն 1-ի վերլուծությունն իրականացվել է երկու փուլերի համար՝

1. էլեկտրական ցանցին միացման պայմանագրի կնքում,
2. էլեկտրամատակարարման պայմանագրի կնքում:

Վերլուծության առաջին փուլում ուսումնասիրվել են դիմող անձանց էլեկտրական ցանցին միացման պայմանագիր կնքելու, իսկ երկրորդ փուլում՝ էլեկտրամատակարարման պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնելու ժամկետները՝

ա. դրանց համապատասխանությունը Որոշում 3-ով սահմանված ժամկետներին որոշելու,

բ. ժամկետների խախտման պատճառները բացահայտելու նպատակով:

Նոր սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման ժամկետների վերլուծությունն իրականացվել է միայն 2015 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ էլեկտրական ցանցին չմիացված պատվերների մասով: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ 2015 թվականի ընթացքում էլեկտրական ցանցին միացված 2 976 սպառման համակարգերից ավելի քան 50%-ի դեպքում արձանագրվել է էլեկտրական ցանցին միացման՝ Որոշում 3-ով սահմանված ժամկետների խախտում:

2.1 Էլեկտրական ցանցին միացման պայմանագրի կնքման գործընթացի վերլուծություն

Համաձայն Տեղեկատվություն 1-ի՝

- 2015 թվականի ընթացքում Ընկերությունը ստացել է նոր սպառողի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման 4 075 դիմում (1 401-ը՝ Երևան քաղաքի վարչական տարածքում, 2 674-ը՝ Հայաստանի Հանրապետության մարզերում): Էլեկտրական ցանցին միացված սպառման համակարգերի թիվը կազմել է 2 976 է (914-ը՝ Երևան քաղաքի վարչական տարածքում, 2 062-ը՝ Հայաստանի Հանրապետության մարզերում).

- 2015 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, իրենց սպառման համակարգերն Ընկերության էլեկտրական ցանցին միացման համար դիմում ներկայացրած բաժանորդներից 1 099-ի սպառման համակարգերը (487-ը՝ Երևան քաղաքի վարչական տարածքում, 612-ը՝ Հայաստանի Հանրապետության մարզերում) դեռևս միացված չեն էլեկտրական ցանցին, որից 761-ի (278-ը՝ Երևան քաղաքի վարչական տարածքում, 483-ը՝ Հայաստանի Հանրապետության մարզերում) դեպքում էլեկտրական ցանցին միացման աշխատանքներն ավարտվել են և դիմող անձանց է ներկայացվել էլեկտրական ցանցին միացման՝ միակողմանի կնքված պայմանագիր, իսկ 30 պատվերի դեպքում էլեկտրական ցանցին միացման աշխատանքները դեռևս գտնվում են ընթացքի մեջ:

Համաձայն Որոշում 3-ի 13.4 կետի՝ էլեկտրական ցանցին միացման դիմումն ստանալու օրվանից մինչև Պայմանագրի կնքման առաջարկություն ներկայացնելու առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել՝

1) 10 աշխատանքային օրը՝ էլեկտրական ցանցին 0,22 կՎ լարմամբ պարզեցված միացման դեպքում, և 25 աշխատանքային օրը՝ էլեկտրական ցանցին 0,22 կՎ լարմամբ միացման մնացած բոլոր դեպքերում,

2) 10 աշխատանքային օրը՝ էլեկտրական ցանցին 0,4 կՎ լարմամբ պարզեցված միացման դեպքում, և 45 օրը՝ էլեկտրական ցանցին 0,4 կՎ լարմամբ միացման մնացած բոլոր դեպքերում,

3) 45 օրը՝ էլեկտրական ցանցին 6(10) կՎ լարմամբ միացման դեպքում,

4) 75 օրը՝ էլեկտրական ցանցին 35 կՎ, 110 կՎ լարմամբ կամ բազմաբնակարան շենքերի միացման դեպքում:

Վերլուծության ընթացքում Ընկերության կողմից էլեկտրական ցանցին միացման դիմումը ստանալուց մինչև դիմող անձանց էլեկտրական ցանցին միացման պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնելու նվազագույն, միջին և առավելագույն ժամկետները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Էլեկտրական ցանցին միացման պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնելու ժամկետների վերաբերալ

№	Լարման մակարդակ	Նվազագույն ժամկետ (օր)	Միջին ժամկետ (օր)	Առավելագույն ժամկետ (օր)	Դիտարկված պատվերների քանակ (հատ)
1	**0.22 կՎ լարման ցանցին միացվող սպառողներ**	**0**	**17.3**	**145**	**2970**
1.1	***Պարզեցված***	***0***	***7.3***	***84***	***2459***
1.2	***Նախագծով***	***0***	***68.3***	***161***	***511***
2	**0.4 կՎ լարման ցանցին միացվող սպառողներ**	**0**	**32.7**	**158**	**568**
2.1	***Պարզեցված***	***0***	***6.3***	***64***	***321***
2.2	***Նախագծով***	***0***	***69.2***	***167***	***247***
3	**6(10) կՎ լարման ցանցին միացվող սպառողներ**	**1**	**77.8**	**202**	**47**
3.1	***Պարզեցված***	***18***	***18***	***18***	***1***
3.2	***Նախագծով***	***1***	***79.1***	***202***	***46***
4	**Բազմաբնակարան շենք**	**31**	**118**	**172**	**16**
4.1	***Պարզեցված***	***0***	***0***	***0***	***0***
4.2	***Նախագծով***	***31***	***118***	***172***	***16***
5	**Երկրորդ սնուցում**	**0**	**43.7**	**179**	**57**
5.1	***Պարզեցված***	***0***	***5.8***	***33***	***30***
5.2	***Նախագծով***	***35***	***87.8***	***179***	***26***

Ինչպես երևում է Աղյուսակ 5-ում բերված տվյալներից՝ որոշ դեպքերում Ընկերության կողմից էլեկտրական ցանցին միացման դիմումը ստանալուց դիմող անձին էլեկտրական ցանցին միացման պայմանագիր կնքելու առաջարկություն է ներկայացվել դիմելու օրը, այն պարագայում, երբ էլեկտրական ցանցին միացման պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ էր մշակել նախագծային և նախահաշվային փաստաթղթեր: Նշված փաստը պարզաբանման կարիք ունի:

Էլեկտրական ցանցին միացման պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնելու ժամկետների վերլուծությունը ցույց տվեց, որ 700 պատվերների դեպքում առկա է նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման՝ Որոշում 3-ով սահմանված ժամկետների խախտում, որից 392 դեպքում դիմող անձանց էլեկտրական ցանցին միացման՝ միակողմանի ստորագրված պայմանագիրն ուղարկվել է սահմանված ժամկետի լրանալուց հետո, իսկ 308 դեպքում դիմող անձանց էլեկտրական ցանցին միացման պայմանագիր դեռևս չի ներկայացվել: Նշված խախտումներն առավել մանրամասն ներկայացված են Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Ընկերության կողմից դիմող անձանց սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման պայմանագրի կնքման առաջարկություն ներկայացնելու ժամկետների վերաբերյալ

Լարման մակարդակը, միացման տեղակը	Խախտման դեպքերի քանակը	
	Էլ. ցանցին միացման պայմանագիր չստացած պատվերների մասով	**Էլ. ցանցին միացման պայմանագիրը սահմանված ժամկետի խախտմամբ ստացած պատվերների մասով**
0.22 կՎ լարմամբ պարզեցված միացումներ	55	84
0.22 կՎ լարմամբ միացումներ նախագծերով	105	159
0.4 կՎ լարմամբ պարզեցված միացումներ	9	7

0.4 կՎ լարմամբ միացումներ նախագծերով (մինչև 30 կՎԱ հզորություն)	56	54
0.4 կՎ լարմամբ միացումներ նախագծերով (30 կՎԱ-ից բարձր հզորություն)	34	29
6(10) կՎ լարմամբ միացումներ	21	26
35 կՎ լարմամբ միացումներ	1	0
110 կՎ լարմամբ միացումներ	0	0
Պահուստային սնուցման միացումներ	12	19
Բազմաբնակարան շենքերի միացումներ	15	14
ԸՆԴԱՄԵՆԸ	**308**	**392**

Էլեկտրական ցանցին միացման՝ միակողմանի ստորագրված պայմանագիր չստացած պատվերների մասով արձանագրված խախտումների պատճառների վերլուծությունը ներկայացված է Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

Ընկերության կողմից դիմող անձանց սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման պայմանագրի կնքման առաջարկություն ներկայացնելու ժամկետների վերաբերյալ

Խախտման պատճառը	Խախտման դեպքերի քանակը		
	ՀՀ	**Երևան**	**Մարզեր**
Դիմող անձը հրաժարվել է դիմումից	2	0	2
Ընկերության ներքին գործընթացների թերի կազմակերպման արդյունքում	190	93	96
Պետական կամ ՏԻ մարմինների գործունեությամբ պայմանավորված	101	92	10
Այլ (դիմողի հետ կնքվել է համաձայնագիր՝ նոր ժամկետի մասին)	15	5	10
ԸՆԴԱՄԵՆԸ	**308**	**190**	**118**

Համաձայն Աղյուսակ 4-ի՝ դիմող անձանց էլեկտրական ցանցին միացման միակողմանի կնքված պայմանագրի ներկայացման ժամկետների խախտման պատճառների հիմնական մասը բաժին է ընկնում Ընկերության ներքին գործընթացների թերի կազմակերպմանը և պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությամբ պայմանավորված դեպքերին:

Հանձնաժողով աշխատակազմը առանձին վերլուծություն է իրականացրել Ընկերության կողմից դիմող անձանց էլեկտրական ցանցին միացման միակողմանի կնքված պայմանագրի ներկայացման ժամկետների՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությամբ պայմանավորված խախտումների պատճառները բացահայտելու նպատակով: Վերլուծության արդյունքում պարզվել է, որ նշված խախտումներն առավելապես պայմանավորված են Ընկերության կողմից իրականացվող նախագծման աշխատանքների ընթացքում ծագող խնդիրներով, մասնավորապես՝ հողահատկացման, նախագծերի համաձայնեցման և այլն:

Ստորև առավել մանրամասն ներկայացված են նոր սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման միակողմանի կնքված պայմանագրի ներկայացման ժամկետների՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությամբ պայմանավորված խախտումների պատճառները (Աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Պետական կամ ՏԻ մարմինների գործունեությամբ պայմանավորված Ընկերության կողմից դիմող անձանց սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման պայմանագրի կնքման առաջարկություն ներկայացնելու ժամկետների վերաբերյալ

№	Խախտման պատճառը	Խախտման դեպքերի քանակը		
		ՀՀ	Երևան	Մարզեր
1	Պետական կամ ՏԻ մարմիններից պատասխան չի ստացվել ուղեգծի/նախագծի համաձայնեցման վերաբերյալ	81	72	9
2	Ուղեգիծը/նախագիծը մերժվել է պետական կամ ՏԻ մարմինների կողմից	20	20	0
	ԸՆԴԱՄԵՆԸ	**101**	**92**	**9**

Վերլուծության ընթացքում առանձին ուսումնասիրվել են նախագծող կապալառու ընկերությունների կողմից նախագծման անհրաժեշտություն ունեցող աշխատատանքների դեպքում պայմանագրի կնքման ժամկետները: Համաձայն Տեղեկատվություն 1-ի՝ 2015 թվականին էլեկտրական ցանցին միացման դիմում ներկայացրած պատվերներից 30%-ի դեպքում մշակվել են նախագծանախահաշվային փաստաթղթեր, որոնք իրականացրել է նախագծող կապալառու կազմակերպությունը կամ Ընկերությունը՝ սեփական ուժերով:

Ընկերության կողմից սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման նպատակով անհրաժեշտ նախագծման աշխատանքների նախապես սահմանված ժամկետների և փաստացի ժամկետների համադրությունը ցույց է տվել, որ նախագծի կազմման ժամկետը պահպանվել է 927-ից 266 դեպքում, իսկ 661 դեպքում նախագծման փաստացի ժամկետը գերազանցել է սահմանվածը: Նշված ժամկետների վերլուծության արդյունքները ներկայացված են Աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5

Նախագծման ժամկետների վերաբերյալ

Պատվերների քանակ (հատ)	Նախագծման ժամկետի գերազանցում (անգամ)
298	**Մինչև 2**
339	**2-10**
24	**10-ից ավելի**

Այս համատեքստում, հատկանշական է այն հանգամանքը, որ Ընկերությունը չի պահպանում վերջինիս կողմից 2012 թվականի դեկտեմբերի 13-ին հաստատված «Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման կանոնակարգի» դրույթները, համաձայն որի՝ նախագծող կազմակերպությունների ընտրությունն իրականացվում է մրցակցային եղանակով: Նշված կանոնակարգի ընդունումն ուղղված էր նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման՝ Ընկերության կողմից իրականացվող ներքին գործընթացների բարելավմանը, այդ թվում՝ նախագծման ժամկետների կրճատմանը: Հարկ է նշել, որ Ընկերության կողմից մեկ կապալառուի հետ պայմանագրի կնքումը, հանձնաժողովը համարում է անընդունելի, ինչի մասին բազմիցս նշվել է:

2.2 Էլեկտրամատակարարման պայմանագրի կնքման գործընթացի վերլուծություն

Համաձայն Տեղեկատվություն 1-ի՝ 2015 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ էլեկտրամատակարարման պայմանագիր կնքելու առաջարկություն է ստացել 2015 թվականին էլեկտրական ցանցին միացման դիմում ներկայացրած անձանցից 135-ը (70-ը՝ Երևան քաղաքի վարչական տարածքում, 65-ը՝ Հայաստանի Հանրապետության մարզերում), իսկ 81 պատվերի դեպքում

էլեկտրամատակարարման ապահովմանն ուղղված աշխատանքները գտնվում են ընթացքի մեջ:

Էլեկտրամատակարարման պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնելու ժամկետների վերլուծությունը ցույց տվեց, որ 307 պատվերների դեպքում առկա է նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման՝ Որոշում 3-ով սահմանված ժամկետների խախտում, որից 59 դեպքում դիմող անձանց էլեկտրամատակարարման պայմանագիրն ուղարկվել է սահմանված ժամկետի լրանալուց հետո, իսկ 248 դեպքում դիմող անձանց էլեկտրամատակարարման պայմանագիր դեռևս չի ներկայացվել: Նշված խախտումներն առավել մանրամասն ներկայացված են Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6

Ընկերության կողմից դիմող անձանց էլեկտրամատակարարման պայմանագրի կնքման առաջարկություն ներկայացնելու ժամկետների վերաբերյալ

Լարման մակարդակը, միացման տեղակը	Խախտման դեպքերի քանակը	
	Էլ. ցանցին միացման պայմանագիր չստացած պատվերների մասով	**Էլ. ցանցին միացման պայմանագիրը սահմանված ժամկետի խախտմամբ ստացած պատվերների մասով**
0.22 կՎ լարմամբ պարզեցված միացումներ	75	19
0.22 կՎ լարմամբ միացումներ նախագծերով	91	20
0.4 կՎ լարմամբ պարզեցված միացումներ	12	1
0.4 կՎ լարմամբ միացումներ նախագծերով (մինչև 30 կՎԱ	21	7

հզորություն)		
0.4 կՎ լարմամբ միացումներ նախագծերով (30 կՎԱ-ից բարձր հզորություն)	16	5
6(10) կՎ լարմամբ միացումներ	13	2
35 կՎ լարմամբ միացումներ	0	0
110 կՎ լարմամբ միացումներ	0	0
Պահուստային սնուցման միացումներ	12	1
Բազմաբնակարան շենքերի միացումներ	8	4
ԸՆԴԱՄԵՆԸ	**248**	**59**

Էլեկտրամատակարարման պայմանագիր կնքելու առաջարկություն չստացած պատվերների մասով արձանագրված խախտումների պատճառների վերլուծությունը ներկայացված է Աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7

Ընկերության կողմից դիմող անձանց էլեկտրամատակարարման պայմանագրի կնքման առաջարկություն ներկայացնելու ժամկետների վերաբերյալ

Ընկերության կողմից դիմող անձանց էլեկտրամատակարարման պայմանագրի կնքման առաջարկություն ներկայացնելու ժամկետների խախտման պատճառը	Ընկերության կողմից դիմող անձանց էլեկտրամատակարարման պայմանագրի կնքման առաջարկություն ներկայացնելու ժամկետների խախտման դեպքերի քանակն՝ ըստ տարածաշրջանի		
	ՀՀ	**Երևան**	**Մարզեր**
Դիմող անձը չի վճարել միացման վճարը	31	12	19
Դիմող անձը չի ներկայացրել սահմանված փաստաթղթերը	2	1	1

Ընկերության ներքին գործընթացների թերի կազմակերպման արդյունքում	55	13	42
Պետական կամ ՏԻ մարմինների գործունեությամբ պայմանավորված	1	1	0
Այլ (դիմողի հետ կնքվել է համաձայնագիր՝ նոր ժամկետի մասին)	159	49	110
ԸՆԴԱՄԵՆԸ	**248**	**76**	**172**

Ինչպես երևում է Աղյուսակ 8-ից, Ընկերության կողմից դիմող անձանց էլեկտրամատակարարման պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնելու՝ Որոշում 3-ով սահմանված ժամկետների խախտման դեպքերից գրեթե 60%-ում դիմող անձանց հետ կնքվել է լրացուցիչ համաձայնագիր՝ էլեկտրական ցանցին միացման ժամկետի երկարաձգման վերաբերյալ:

Համաձայն Որոշում 3-ի 13.5 կետի՝ նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման պայմանագրի կնքման օրվանից մինչև դիմող անձին էլեկտրամատակարարման պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնելու առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել՝

1) 10 աշխատանքային օրը՝ էլեկտրական ցանցին 0,22 կՎ լարմամբ պարզեցված միացման դեպքում, և 25 աշխատանքային օրը՝ էլեկտրական ցանցին 0,22 կՎ լարմամբ միացման մնացած բոլոր դեպքերում,

2) էլեկտրական ցանցին 0,4 կՎ լարմամբ՝

ա. 10 աշխատանքային օրը՝ պարզեցված միացման դեպքում,

բ. 45 օրը՝ մինչև 30 կՎԱ (ներառյալ) հզորությամբ միացման մնացած բոլոր դեպքերում,

գ. 90 օրը՝ 30 կՎԱ-ից բարձր միացման մնացած բոլոր դեպքերում,

3) 100 օրը՝ էլեկտրական ցանցին 6(10) կՎ լարմամբ միացման դեպքում,

4) 270 օրը՝ էլեկտրական ցանցին 35 կՎ, 110 կՎ լարմամբ կամ բազմաբնակարան շենքերի միացման դեպքում:

Վերլուծության ընթացքում Ընկերության կողմից դիմող անձանց էլեկտրամատակարարման պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնելու նվազագույն, միջին և առավելագույն ժամկետները ներկայացված են Աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8

Էլեկտրամատակարարման պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնելու ժամկետների վերաբերալ

№	Լարման մակարդակ	Նվազագույն ժամկետ (օր)	Միջին ժամկետ (օր)	Առավելագույն ժամկետ (օր)	Դիտարկված դեպքերների քանակ (հատ)
1	**0.22 կՎ լարման ցանցին միացվող սպառողներ**	**0**	**21.2**	**136**	**2552**
1.1	***Պարզեցված***	***0***	***16.1***	***123***	***2206***
1.2	***Նախագծով***	***2***	***54.8***	***189***	***346***
2	**0.4 կՎ լարման ցանցին միացվող սպառողներ**	**0**	**28.0**	**154**	**442**
2.1	***Պարզեցված***	***0***	***14.5***	***78***	***287***
2.2	***Նախագծով***	***3***	***54.2***	***175***	***155***
3	**6(10) կՎ լարման ցանցին միացվող սպառողներ**	**14**	**83**	**167**	**14**
3.1	***Պարզեցված***	***14***	***14***	***14***	***1***
3.2	***Նախագծով***	***28***	***88.3***	***167***	***13***
4	**Բազմաբնակարան շենք**	**93**	**116.4**	**149**	**5**
4.1	***Պարզեցված***	***0***	***0***	***0***	***0***
4.2	***Նախագծով***	**93**	**116.4**	**149**	**5**
5	**Երկրորդ սնուցում**	**1**	**18.8**	**49**	**33**
5.1	***Պարզեցված***	***1***	***12.5***	***48***	***24***
5.2	***Նախագծով***	***15***	***33.8***	***43***	***8***

Վերլուծության ընթացքում ուսումնասիրվել են առանց համապատասխան միացման վճարի գանձման՝ էլեկտրական ցանցին միացման դեպքերը: Մասնավորապես, Հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» 307Ն որոշման համաձայն, սկսած 2011 թվականի հոկտեմբերի 1-ից՝ նոր սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման նպատակով դիմող անձը պարտավորվում է վճարել սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման վճարի 50%-ը՝ էլեկտրական ցանցին միացման պայմանագիրը կնքելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում: Միևնույն ժամանակ, համաձայն նույն որոշման՝ միացման վճարի մնացած մասը դիմող անձը պարտավորվում է վճարել էլեկտրամատակարարման աշխատանքների ավարտից առնվազն 5 աշխատանքային օր առաջ: Տեղեկատվություն 1-ի ուումնասիրությունը ցույց տվեց, որ 2015 թվականի ընթացքում էլեկտրական ցանցին առանց կանխավճարի միացված պատվերների թիվը կազմել է 134, իսկ առանց միացման վճարի ամբողջական վճարման էլեկտրական ցանցին միացումների թիվը՝ 40: Նշված պատվերների մասով անհրաժեշտ է Հանձնաժողով ներկայացնել համապատասխան պարզաբանումներ:

Հարկ է նշել նաև, որ որոշ դեպքերում էլեկտրական ցանցին միացման՝ ժամկետները խախտվել են դիմող անձանց պատճառով: Մասնավորապես, Տեղեկատվություն 1-ում առկա 297 դեպքում (119-ը՝ Երևան քաղաքի վարչական տարածքում, 178-ը՝ Հայաստանի Հանրապետության մարզերում) դիմող անձինք 2015 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ չեն ստորագրել Ընկերության ներկայացրած միացման պայմանագիրը: Նշված պատվերների ուղղությամբ Ընկերությունն արդեն իսկ իրականացրել է 47 մլն դրամի ներդրումներ, որոնք, ըստ էության, ենթակա չեն սակագնով փոխհատուցման, քանի որ դրանք դեռևս չեն մասնակցում Ընկերության լիցենզավորված գործունեությանը: Ուստի, նպատակ ունենալով նվազագույնի հասցնել Ընկերության կողմից իրականացվող ծախսումների փոխհատուցման ռիսկերը՝ Հանձնաժողովը նախատեսում է Որոշում

3-ում կատարել համապատասխան փոփոխություն, համաձայն որի՝ էլեկտրական ցանցին միացման աշխատանքները կսկսվեն միացման պայմանագիրը կնքելուց հետո:

Եզրակացություններ և առաջարկություններ

1. 2015 թվականի ընթացքում էլեկտրական ցանցին միացման դիմում է ներկայացրել 4 297 բաժանորդ, որոնցից 2 977-ի սպառման համակարգերը 2015 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ միացվել են էլեկտրական ցանցին:

2. 2015 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ էլեկտրական ցանցին չմիացված պատվերներից 700-ի դեպքում առկա է էլեկտրական ցանցին միացման պայմանագրի կնքման, իսկ 307-ի դեպքում՝ էլեկտրամատակարարման պայմանագրի կնքման ժամկետների խախտում:

3. Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակումը հիմնականում իրականացվում է մեկ գլխավոր կապալառու կազմակերպության, իսկ որոշ դեպքերում նաև՝ Ընկերության կողմից՝ սեփական ուժերով: Վերլուծությունը ցույց տվեց, որ էլեկտրական ցանցին միացման գործընթացում նախագծման ժամկետները խախտվել են 71% պատվերների դեպքում: Ուստի անհրաժեշտ է միջոցառումներ ձեռնարկել աշխատանքների կազմակերպման արդյունավետության բարձրացման ուղղությամբ, որը կնպաստի գործընթացի առավել ճշգրիտ և արդյունավետ կազմակերպմանը:

4. Էլեկտրական ցանցին միացման պայմանագրի կնքման ժամկետների խախտման գերակշիռ մասը՝ շուրջ 60%-ը, պայմանավորված է Ընկերության ներքին գործընթացների թերի կազմակերպմամբ, իսկ 34%-ը՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությամբ: Էլեկտրամատակարարման պայմանագրի կնքման ժամկետների խախտման պատճառների գերակշիռ մասը ևս բաժին է ընկնում Ընկերության ներքին գործընթացների թերի կազմակերպմանը: Ուստի, և՛ ընկերության ներքին ընթացակարգերը, և՛ պետական, տեղական ինքնակառավարման մարմինների հետ համաձայնեցման գործընթացը լուրջ բարելավումների կարիք ունեն:

Ամփոփելով՝ հարկ է նշել, որ նոր սպառողի սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման գործընթացը մշտապես գտնվում է Հանձնաժողովի ուշադրության կենտրոնում: Հանձնաժողովը, Ընկերության հետ համատեղ, շարունակական միջոցառումներ է իրականացնում իրավական դաշտի

կարգավորման, միացման ժամկետների կրճատման և Համաշխարհային բանկի կողմից հրապարակվող «Գործարարությամբ զբաղվելը» ամենամյա զեկույցի «Էլեկտրական ցանցին միացում» ցուցիչը բարելավելու ուղղությամբ: Այս առնչությամբ, Հանձնաժողովը մշակել է համապատասխան որոշման նախագիծ, որով նախատեսվում է նոր սպառման համակարգերը 30 կՎԱ հզորությամբ 0,4 կՎ լարման, ինչպես նաև 6(10) կՎ լարման ցանցին միացման ժամկետները կրճատել յուրաքանչյուրը 15 օրով:

Հղումներ օգտագործված նյութերին

Որոշում 1 - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 16-ի «ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» №439Լ որոշում.

Որոշում 2 - ՀՀ կառավարության 2016 նթվականի փետրվարի 11-ի «Հայաստանի Գործարար միջավայրի բարելավման 2016 թվականի միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» №110Ա որոշում.

Որոշում 3 - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» №358Ն որոշում.

Որոշում 4 - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 21-ի «Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման վճարները հաստատելու մասին» №659Ն որոշում.

Տեղեկատվություն - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 6-ի «Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման գործընթացի իրականացման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման կարգը հաստատելու մասին» №199Ա որոշմամբ սահմանված կարգով ներկայացվող եռամսյակային տեղեկատվություն

Տեղեկատվություն 1 - նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման գործընթացի վերաբերյալ Ընկերության ներկայացրած ընդլայնված տեղեկատվություն